

ԲՈՐԴՈՒԳԱԼ

ԻՐ ԱՆՑԵԱԼՆ ԵՒ ԱՊԱԿԱՅՆ

Բորգուզալ եթէ ունի յանցանք մը՝ քիչ ճանչցուած ըլլալն է. չկայ ուրիշ ազգ կամ երկիր, որ ասոր չափ նուազ հետաքննեալ ըլլայ յուզեալորաց. և ահա այս պատճառաւ շատ մ'անտեղի բաներ կը պատմուին իր ելումուտից և տրոց, գաղթականութեանց և վաճառականութեան, քաղաքական և պատժական տեսչութեանց, բարուց և օրինաց մասին:

Անգղիա որ շատ յարաբերութիւններ ունեցած է այս աշխարհին հետ 'ի վաճառականութեան և 'ի քաղաքավարութեան, նոյն իսկ և ինքն ուրիշներէն աւելի տեղեկութիւն մը չունի: Բայց չկայ երկիր՝ ուրուն հետ այնչափ շաղկապաւ ըլլայ Բորգուզալ պատմութեամբ, ինչպէս Գաղղիոս: Բուրգոնեան ասպետ մը կը հաստատէ Բորգուզալի թագաւորութիւնը, և Ս. Բեռնարդոսի կը նուիրէ իր աւաջին նուաճեալ երկիրները: Այս Գաղղիացիք օգնութեան կը հասնին իրեն, և իրենց որդւովքը կը բազմամարդանայ երկիրը: Ասով Բարիդու և իջգլոմայի արքունիքը գրեթէ կը միանան իրարու հետ. ապա Բորգուզալի թագուհւոյն խնդրանք, Փիլիպպոս-Ալգոստոս կը պարզէ անոր մէկ որդւոյն Ֆլանտրայի կոմսութիւնը, և կ'ամուսնանայ Պոտուէնի դստեր հետ: Ալգոնտոս Գ. Ս. Լուզովիկոսի հետ կը դաստիարակի, և կը յաղթեն մէկտեղ Անգղիացւոց:

Մինչեւ կը շարունակուէին այս երկու արքունեաց յարաբերութիւնքը, Բորգուզալցիք Մաւրիտանացւոց հողագործութեամբն և աշխատութեամբ հարստանալով, կը նաւեն Օլեոնի, Պրոքանեի և Նորմանտիոյ ծովերը, և գաղթականութիւն մը կը հաստատեն 'ի Հարֆլէօր քաղաք Գաղղիոյ և անկէ կը սխուրին ընդ ամենայն երկիրն՝ պաշտպանութեամբ թագաւորաց Գաղղիոյ: Նոյնպէս և Գաղղիացիք գաղթականութիւն մը կը հաստատեն 'ի իջգլոմայի, և մի և նոյն արտօնութիւնները կ'ունենան ինչ որ Բորգուզալցիք 'ի Գաղղիա:

Ի բաց թողլով ուրիշ յարաբերութիւնները, քաղաքական դաշնադրութիւնները, ամուսնութիւններն և բանագնացութիւնները, որոնք աւելի ևս պնդեցին այս երկու ազգաց միութեան կապը, կը հասնինք մինչ-

չև այն ժամանակը՝ յորում Փիլիպպոս Բ. Սպանիոյ թագաւորը կ'ուզէ տիրել Բորգուզալի, որովհետև Սիբաստիանոս չէր ուզէր ամուսնանալ և անժառանգ պիտի մնար յետ մահու: Եւ յիշուի գրաւելով վերջապէս Բորգուզալի արքունի տոհմը, Փիլիպպոս կը հասնի իր փափաքանացը և կը տիրէ այն թագաւորութեան: Սակայն նոյն տոհմները կը ծնանի Ռիչլիէօ և յամին 1635 կը սկսի յապատամբութիւն դըրգունել գիրգուգալս, զոր կը պատրաստեն և կը զիւրացնեն իր գործակատարքը, ուրով կը ստանայ դարձեալ երկիրն իր առաջին անկախութիւնը յամին 1640: Ռիչլիէօ կը վախճանի, և Մալարէն ու Լուզովիկոս ԺԳ կը շարունակեն նորա ձեռնարկութիւնը, որոց կ'օգնէ և Գիւրնի իր խորհուրդներովք, և այսպէս կը հրաժարի վերջապէս Սպանիա իր ամեն պահանջումներէն:

Դրանօք են ամենուն բղեշխական հասարակապետութեան և կայսերութեան տոհմնի պատահարները, որոնց միայններն ու յանցանքները որբեց այն մեծաճգի գորապետաց արիւնն՝ որ հեղաւ 1832ին Բորգոյի պարսպաց տակ 'ի պաշտպանութիւն ազգային ապստոքեան:

Բայց այսչափ տարուան Գաղղիոյ հետ ունեցած սերտ բարեկամութենէն ետքը, ինչպէս մեկնելու է այն մոռացութիւնն յորում կը գտնուի այսօր Բորգուզալ, և Եւրոպիոյ ժողովրդոց գինը չի յիշել, որ երկար ժամանակ իր անուան և հարստութեան աշխատակալ լեցուց զԷրուդէ: Այս մոռացութիւնն ոչ մի ժողովրդեան և ոչ մի աշխարհի ընծայելու է, այլ զիպաց պատճառքն բազմատեսակ են և ոմանք կարծամանակեայք:

Առաջինն 'ի Բորգուզալաց իշխանութեան բարձունն 'ի Նիգիլաւանէ, պատմաաւազային անյանդուգի քաղաքագիտութեան, զոր գրգռեց Փիլիպպոս Բ. և կատարեցին իր յաջորդքը, որով ընկաւ այն մեծազօր և յայնստաման գաղթականութեան պետութիւնը, որ կը տարածուէր բոլոր Ափրիկէի և Ասիոյ ափանց վրայ, սկսեալ 'ի Սենեկաիոյ մինչև Մալակայի կիրճը: Երկրորդ պատճառն է՝ գաղթականաց պետութեան նուաճումը դաշնադրութեան մ'աղքեցութեան տակ, որով արգիլուեցաւ երկաւ գործութեան և ձեռագործ արուեստից զարգացումը: Երրորդ պատճառն ալ է՝ Բորգուզալաց անհոգութիւնն որ փոյթ չբրին յարաբերութիւնները նորոգել այն աշխարհաց հետ, և թողուցին որ անոն շահնկալութիւնը զէպ 'ի Նիգիլաւանի գառնայ: Եւ վերջապէս Սպանիոյ շարու-

նակեալ ողորմ վիճակը, և դարուս առաջին կիսուն ներքին խռովութիւնները, ուրոց առաջին նշանը Գաղղիա տուեր էր, ուրով ոտն առ ոտն տկարացաւ Բորգուզալ:

Բայց այսօր ամենայն ինչ կերպարանափոխ եղած է. այն երկիրն որուն վրայ հափու կը նայուէր ու կը խօսուէր, արժանի է առանձին մտադրութեան. որուն արագաքայլ զարգացումն ու յառաջդիմութիւնը կը վկայէ լատինացեղ ազգաց կարողութեան, որ երբ դիտեալ նպատակի մը կ'ուղեն հասնիլ, կը տապալեն ի և արգել, և կարծես նոր զօրութիւն կը զգենուն ետև չի մնալու վախով:

Քսան տարիէ 'ի վեր դադրեցաւ խռովութեան թուականը, յառաջդիմութեան սերը զօրացաւ, երկրագործութիւնը ընտանեցաւ. կատարելութեանց հետ ու անոնց առարկայն եղաւ, և ճարտարութեամբ մտան 'ի Բորգուզալ իրենց ամենայն մասամբ. անանկ որ քանի որ տարի առաջ հրաւիրեցին բովանդակ Եւրոպայ յաշխարհահանգէն Բորգուչի, որ մօտեցաւ, ըլնենք և հաւասարեցաւ համեմատութեամբ Լոնտոնի, Բարիգի և Վեննայի վերջին Ալխարհահանգիսից:

Յամին 1851, Բորգուզալ և ոչ մի քիլոմետր կառագնաց ճամբայ ունէր, եթէ 'ի բաց հանելու ըլլանք Լիզպոնայէն 'ի Սինդրա քաղաք եղած ճամբան, և ահա այսօր 3500 քիլոմետրէն աւելի ունի. չունէր և ոչ մի քիլոմետր երկաթուղի, և ունի հիմա գրեթէ 900 քիլոմետր, 'ի բաց թողով զըրամվայս, որ կը հատանն անրեղհատ Բորգուչի ու Լիզպոնայի ճամբան: Ասոնցմէ դատ գետուց վրայ երկու հարիւրի չափ կաւուրէք շինուեցան, և հաստատուեցան 3000 քիլոմետր երկայնութեամբ հեռադրական գիծք, և ընկղմեցաւ այն պարանին մէկ մասը՝ որ քիչ ոտենէն պիտի միացնէ Բորգուզալ Պրազիլի հետ. և շողմուղ նաւաց քանի մը կ'անոնաւոր գիծք 'ի յարաբերութեան գրին զԲորգուզալ իր զլիսաւոր գաղթականութեան աշխարհաց հետ:

Այս ամեն շինութեանց՝ դրամով դիմանալու համար, պանազան գրաւքով կը կերտուեցան հաստատուեցան. և Բորգուչի ու Լիզպոնայի վաղեմի դրամասեղանոց վրայ աւելցան Լուսիտանիա, Ուլդրամարէն, Վաճառականական միութիւն, Դաշնակցութիւն, Հասարակաց օգտակարութիւնք և Վաճառականական բուռած գրամասեղանք. որոց պայմանական ձեռնտուութիւնը սիրտ տուաւ տէրութեան ան երկիւղ հասարակաց փոխառութիւններ ընելու: Անանկ որ տասն և հինգ տարուան

միջոցի մէջ շարժուն ընչից և վաճառականութեան հարստութիւնն եռապատկեցաւ: Թէպէտ քիչ մը տաղնապոյ առիթ տուաւ աշխատութեանց և շինութեանց մի և նոյն ժամանակի մէջ պատահելը, բայց տէրութիւնը դիմացաւ այս ամեն պարտաւորութեանց, ստիպուելով երբեմն փոխ առնուլ մինչև 17 և 20 տոկոսեօք:

Նիւթական յառաջդիմութեան հետ միաքայլ ընթացաւ և բարոյական յառաջդիմութիւնը: Գաղղիներ բացուեցան, գրաստուններ հաստատուեցան և թանգարաններ, դիտարաններ ու գործարաններ շինուեցան: Իրաւ է թէ տակաւին շատ բանի կը կարօտի ժողովրդական կրթութիւնը. բայց միանգամայն խոստովանելու է որ այդ մասն ալ մեծաքայլ զարգացաւ: Տէրութեան պահած դպրոցքն որ 1838ին 994 էին և 1854ին 1139, այսօրուան օրս 2303 կը համարուէ. միայն անցեալ տարւոյն մէջ 150 նոր դպրոցք հաստատուեցան: Եւ թէ որ ցաւալի բան մը կայ, այն է՝ որ 1844 ամին դպրոցաց պարտաւորիչ յաճախութեան օրինաց պահպանութիւնը խափանեցաւ. այլ կարելի է որ քուէարկութեան իրաւունքը կարգաւ և գրեւ գիտողաց պահելը՝ զոր կը խորհի տէրութիւնն առաջարկել, կարենայ այդ վնասուց դարման ընել:

Խոյ դպրոցաց նկատմամբ ցորեկօթեայ աշակերտութեան գրութիւնը գիշերօթիւոյ դրութիւնէն լաւագոյն համարեցան, և այս ոչ առանց պատճառի. զի փորձով ընտրելագոյն և օգտակարագոյն գտան: Լեզուագիտութեան ուսումը գրեթէ բոլորովին վերացին իրենց դպրոցաց մէջէն. վասն զի քիչ մը բարձրաստիճան ընկերութեանց մէջ թէ որ քիչ մը մայրենի լեզուաւ գրոց պակասութիւն կամ անբաւականութիւն իմանան, մէկէն օտարագոյն գրեանց կը դիմեն թողով զազգայինը:

Փաղաքական վերանորոգութիւնը կարևոր դատեց ազատութիւն շնորհել տրպագրութեան, բայց ասով չխախտեցան բարոյականին զլիսաւոր հիմունքը. մահուան պատիժն որ շատոնց անգործաբերի մնացեր էր՝ ջնջուեցաւ, սակայն յանցաւորութեանց թիւը տարբերութիւն մը չկրեց. անդրանկութեան օրէնքը վերցաւ, և քուէարկութեան իրաւունքը դիւրացաւ: Բորգուզալ եթէ յաջողի իր այս փոփոխութեանց մէջ, առաջինն պիտի համարուի, վասն զի շատերը փորձեցին և վնասեցան մանաւանդ քան թէ օգտուեցան: